

«Beeline Բոնուս» ծրագրի պայմանները

«Beeline Բոնուս»-ը բոնուսային ծրագիր է, որը հնարավորություն է տալիս «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ բջջային կապի ձայնային սակագնային փաթեթների բաժանորդներին կուտակել բոնուսային միավորներ և փոխանակել դրանք Ընկերության կողմից առաջարկվող մի շարք ծառայություններով և սարքավորումներով:

Ծրագիրը հասանելի է «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ բջջային կապի ֆիզիկական անձ հանդիսացող կանխավճարային և հետվճարային հաշվարկային համակարգերի բաժանորդներին, իրավաբանական անձ հանդիսացող կանխավճարային հաշվարկային համակարգի բաժանորդներին և «Իմ կազմակերպություն» ծրագրի մասնակիցներին:

1. Բաժանորդների գրանցումը բոնուսային ծրագրում

Բոնուսային ծրագրում գրանցվելու համար կանխավճարային հաշվարկային համակարգի բաժանորդները պետք է հավաքեն *777# USSD հրահանգը, իսկ հետվճարային հաշվարկային համակարգի բաժանորդները՝ զանգահարեն 0674777 համարին: Հարցումն ուղարկելուց հետո բաժանորդը ստանում է «Beeline Բոնուս» ծրագրին գրանցման վերաբերյալ ծանուցում: Բոնուսային ծրագրում գրանցումն ու մասնակցությունն անվճար են:

2. Բոնուսային միավորների կուտակման պայմաններ

- Օրվա ընթացքում ծախսված յուրաքանչյուր 50 դրամի դիմաց կուտակվում է 5 միավոր:
- Օրվա ընթացքում նվազագույն ծախսը՝ 50 դրամ:
- Օրվա ընթացքում բոնուսային միավորների առավելագույն քանակ՝ 20:

Կանխավճարային և հետվճարային հաշվարկային համակարգերի բաժանորդներին բոնուսային միավորները տրամադրվում են օրվա ընթացքում հիմնական հաշվեկշռից էլքային զանգերի, SMS (բացառությամբ «SMS Պրեմիում» ծառայության) և MMS ծառայությունների ծախսերի դիմաց:

«Բալանսի փոխանցում» ծառայությունով միջոցների փոխանցման դիմաց բոնուսային միավորներ չեն կուտակվում:

Հետվճարային համակարգի բաժանորդներին բոնուսային միավորները տրամադրվում են յուրաքանչյուր ամսվա 1-ին՝ նախանցած ամսվա ծախսերի համար:

Եթե բոնուսային ծրագրի մասնակիցը չի կատարում բոնուսային միավորների փոխանակում, ապա նրա բոնուսային միավորները կարող են գրոյանալ՝ առանց հետագայում դրանք վերականգնելու հնարավորության: Զրոյացումից հետո միավորները կկուտակվեն բոնուսային ծրագրի պայմաններով գրոական հաշվեկշռից: Միավորների գրոյացման նախատեսված ամսաթվի, ինչպես նաև միավորների պահպանման համար հարցում ուղարկելու հնարավորության վերաբերյալ տեղեկատվությունը օպերատորը տեղադրում է իր պաշտոնական կայքում՝ www.beeline.am:

3. Բոնուսային միավորների փոխանակում

Բոնուսային ծրագրի մասնակիցները կարող են փոխանակել իրենց կուտակված բոնուսային միավորները առաջարկվող ծառայությունների և/կամ սարքավորումների հետ:

Բոնուսային միավորների փոխանակում ներցանցային բոլոնների փաթեթներով

Բոլոններ	Բոնուսային միավորներ	Հարցում՝ կանխավճարային հաշվարկային համակարգի բաժանորդների համար	Հարցում՝ հետվճարային հաշվարկային համակարգի բաժանորդների համար
15	300	*777*1*15#	06747771
30	500	*777*1*30#	

60	900	*777*1*60#	
----	-----	------------	--

Բոնուսային միավորների փոխանակում ներցանցային SMS փաթեթներով

SMS	Բոնուսային միավորներ	Հարցում՝ կանխավճարային հաշվարկային համակարգի բաժանորդների համար	Հարցում՝ հետվճարային հաշվարկային համակարգի բաժանորդների համար
30	300	*777*2*30#	06747772
50	400	*777*2*50#	
100	700	*777*2*100#	

Բոնուսային միավորների փոխանակում GPRS փաթեթներով

MB	Բոնուսային միավորներ	Հարցում՝ կանխավճարային հաշվարկային համակարգի բաժանորդների համար	Հարցում՝ հետվճարային հաշվարկային համակարգի բաժանորդների համար
30	300	*777*6*30#	06747776
50	400	*777*6*50#	
100	700	*777*6*100#	

Բոնուսային միավորների փոխանակում Գեղեցիկ համարներով

Գեղեցիկ համարներ	Բոնուսային միավորներ	Հարցում՝ հետվճարային հաշվարկային համակարգի բաժանորդների համար
Նիկել	1 200	067477755
Բրոնզ	4 000	06747773
Արծաթ	8 000	06747774
Ոսկի	18 000	06747775
Պլատին	30 000	06747775

Բոնուսային միավորների փոխանակում այլ ծառայություններով/սարքավորումներով

Այլ ծառայություններ/սարքավորումներ	Բոնուսային միավորներ	Հարցում՝ հետվճարային հաշվարկային համակարգի բաժանորդների համար
SIM քարտ ²	1 000	06747779

Կանխավճարային հաշվարկային համակարգի բաժանորդների համար բոնուսային միավորների փոխանակումը ներցանցային ըրոպեների, SMS և GPRS փաթեթների հետ իրականացվում է առցանց բաժանորդի կողմից համապատասխան հարցումների ուղարկման միջոցով, իսկ բոնուսային միավորների փոխանակումը Գեղեցիկ համարներով և SIM քարտով իրականացվում է Beeline վաճառքի և սպասարկման գրասենյակներում:

² SIM քարտը տրամադրվում է 1000 դրամ սկզբնական հաշվեկշռով կանխավճարային հաշվարկային համակարգի սակագնային փաթեթի հետ:

Հետվճարային հաշվարկային համակարգի բաժանորդները ամսվա ընթացքում կարող են փոխանակել բոնուսային միավորները միայն մեկ տեսակ ծառայության/սարքավորման հետ: Հետվճարային հաշվարկային համակարգի բաժանորդները բոնուսային միավորները ներցանցային բոլորների, SMS և GPRS փաթեթի, գեղեցիկ համարի, SIM քարտի հետ փոխանակելու համար պետք է ուղարկեն համապատասխան հարցումը՝ մինչև ընթացիկ ամսվա 14-ը ներառյալ: Ընթացիկ ամսվա 15-ից հետո բոնուսային ծրագրի մասնակցին տրամադրվում է բոլորների/SMS/GPRS առավելագույն հնարավոր փաթեթը, իսկ Գեղեցիկ համարի և SIM քարտի տրամադրումն իրականացվում է Beeline վաճառքի և սպասարկման գրասենյակներում՝ ընթացիկ ամսվա 15-ից հետո մեկ ամսվա ընթացքում:

Բոնուսային փաթեթները (SMS, բոլորներ, GPRS) գործում են 7 օրվա ընթացքում՝ բոնուսային միավորների փաթեթներով փոխանակման օրվանից:

Սկզբից օգտագործվում են «Beeline Բոնուս» ծրագրի շրջանակներում բոնուսային փաթեթները (SMS, բոլորներ, GPRS), այնուհետև՝ մնացածը: Հետվճարային հաշվարկային համակարգի սակագնային փաթեթներում, որտեղ կան ներառված ներցանցային բոլորներ/SMS/MB, սկզբում օգտագործվում են ներառված ներցանցային բոլորները/SMS/MB, հետո համապատասխան բոնուսային փաթեթը:

4. Բոնուսային փաթեթների մնացորդի ստուգում

Կանխավճարային հաշվարկային համակարգի բաժանորդները կարող են ստուգել չօգտագործված բոնուսային միավորների քանակը և բոնուսային փաթեթների մնացորդը՝ ուղարկելով *105# անվճար USSD հրահանգը:

Հետվճարային հաշվարկային համակարգի բաժանորդները բոնուսային փաթեթների մնացորդը կարող են ստուգել անվճար՝ հետևյալ եղանակներից մեկով.

- ուղարկելով *706# USSD հրահանգը,
- զանգահարելով 0674706 համարին,
- ուղարկելով 706 տեքստով հաղորդագրություն 0674 համարին:

5. Հավելյալ պայմաններ

Բոնուսային ծրագրի մասնակիցները կարող են հրաժարվել բոնուսային ծրագրին մասնակցությունից՝ զանգահարելով 06747770 համարին: Հարցումն ուղարկելուց հետո բաժանորդը ստանում է «Beeline Բոնուս» ծրագրում իր մասնակցության ավարտի վերաբերյալ ծանուցում: Բոնուսային ծրագրին մասնակցության ավարտից հետո ծրագրի շրջանակներում կուտակված բոնուսային միավորները զրոյանում են և վերականգնման ենթակա չեն:

Բաժանորդային համարի խզման, ինչպես նաև հաշվարկային համակարգի փոփոխման դեպքում (կանխավճարայինից հետվճարային և հակառակը) բոնուսային ծրագրի մասնակցի կուտակված բոնուսային միավորները զրոյանում են և այլևս ենթակա չեն վերականգնման:

«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ առանց նախօրոք ծանուցման կարող է փոփոխել ծրագրի պայմանները՝ տեղադրելով նոր պայմանները և ծրագրի մասին ամբողջական տեղեկատվությունը www.bonus.beeline.am կայքում: